Պ-381-19.11.2019, 15.01.2020-ՊԻ-011 Երկրորդ ընթերցում

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «առնվազն 50» բառերը փոխարինել «առնվազն 25» բառերով,
2) 5-րդ մասում «երեք» բառը փոխարինել «տասն» բառով,
3) 19-րդ մասում «45 օրվա» և «90 օրվա» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «60 օրվա» և «180 օրվա» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 1. Օրենքի 13-րդ հոդվածում՝

4) 1-ին մասում «առնվազն 50» բառերը փոխարինել «առնվազն 25» բառերով,
5) 5-րդ մասում «երեք» բառը փոխարինել «տասն» բառով,

~~6) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.~~

~~«Եթե տասնօրյա ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում չի կայացնում, նախաձեռնող խումբը համարվում է գրանցված»:~~

~~7)~~6) 19-րդ մասում «45 օրվա» և «90 օրվա» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «60 օրվա» և «180 օրվա» բառերով:

~~**Հոդված 2.** Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.~~

~~«Թերությունների հայտնաբերման դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անհապաղ տեղեկացնում է քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչին և տրամադրում 10 աշխատանքային օր՝ հայտնաբերված թերությունները վերացնելու համար»:~~

Հոդված 23. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (*Պ-381-19.11.2019, 15.01.2020-ՊԻ-011/1*) վերաբերյալ ներկայացված առաջարկների

Առաջարկության հեղինակը	***Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջար-կությունը***	***Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)***	***Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը***	***Առաջարկությունն ընդունելու կամ մերժելուվերաբերյալ հանձնաժողովի որոշումը***
ՀՀ կառավարություն	**1-ին հոդվածի 3-րդ կետ**	**Հանել նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետը**	Ընդունվել է	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	**Հոդված 2**	**Հանել նախագծի 2-րդ հոդվածը**	Ընդունվել է	Ընդունվել է